Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Արարատ մարզի, գ. Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջն. դպրոց

Առարկա՝ Ռուսաց լեզու

Թեմա՝ Փոքր խմբերով աշխատանքների առավելություններն ու սահմանափակումները ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Նունե Ասրյան

Ուսուցչուհի՝ Հակոբյան Ռուզաննա

Երևան 2023

Բովանդակություն

1. Նախաբան----------3
2. Փոքր խմբային աշխատանքի նպատակները և կազմակերպման փուլերը--5
3. Խմբերի ձևավորման սկզբունքները, եղանակները, ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը----------7
4. Փոքր խմբով աշխատանքի առավելությունները և սահմանափակումները ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում ----------10
5. Հետազոտական համատեքստ----------11
6. Վերջաբան----------15
7. Գրականության ցանկ----------18

Նախաբան

Ինչպես գիտենք, պետության կայացման հիմքը հասարակության առկայությունն է, հասարակություն, որը բաղկացած է տարբեր անհատներից, ովքեր մշտապես գտնվում են փոխգործակցության մեջ: Ահա այստեղից մի պարզ հետևություն կարող ենք անել առ այն, որ միմյանց հետ համագործակցելու, փոխգործակցելու մեթոդների կիրառումը կարևոր և անհրաժեշտ է ինչպես հասարակական կյանքի մի շարք ոլորտներում, այնպես էլ կրթության կազմակերպման հարցում:

Համագործակցային հմտության դրսևորումներից մեկն էլ խմբային աշխատանքների իրականացումն է, որի մանրամասներն էլ կքննարկենք սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում: Խմբային աշխատանքների իրականացման հմտությունների ձևավորումն իրականում էական նշանակություն ունի ոչ միայն ներկայացված դասը լավ սերտելու, յուրացնելու, այլ այն տարբեր տեսանկյուններից դիտարկելու առումներով, ինչն էլ հնարավորություն է ընձեռում զարգացնել և կատարելագործել աշակերտների մտահորիզոնը:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում բացահայտել խմբային աշխատանքների կատարման հիմնական սահմանափակումներն ու առավելությունները ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում:

Վերոնշյալ նպատակի իրագործման համար մեր առջև դրվել ենք հետևյալ խնդիրները.

- Բացահայտել խմբային աշխատանքների հիմնական էությունն ու նշանակությունը,
- Ուսումնասիրել խմբային աշխատանքների իրականացման մեթոդներն ու ձևաչափերը,
- Վերլուծել խմբային աշխատանքների իրականացման հիմնական առանձնահատկությունները ռուսաց լեզվի դասավանդման համատեքստում:
- Զարգացնել աշակերտների համագործակցային կարողությունները, ձևավորել հմտություններ համագործակցային մեթոդով աշխատանքների համար

Գլխավոր նպատակը՝ սովորել սովորեցնել:

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

- Զևավորում է հաղորդակցման հմտություն
- Զարգացնում է տարբեր բնույթի խնդիրներ լուծելու կարողություն
- Աշակերտները սովորում են միմյանցից
- Խթանում է թիմային աշխատանքը
- Ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար
- Քննարկումների միջոցով ապահովում է աշակերտների համոզմունքը
- Ընձեռնում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Ակնկալվող արդյունքներ.

- Նոր նյութն ավելի լավ կհասկանան փոքր խմբում աշխատելու արդյունքում
- Համագործակցության արդյունքում կկարողանան սովորեցնելով ավելի լավ սովորեն: Կկարողանան իրենց հնարավորությունները ճիշտ դրսևորել թիմային աշխատանքում: Կգիտակցեն իրենց անելիքի կարևոր դերը թիմում
- Ինքնուրույն աշխատելու արդյունքում կզարգանան վերլուծելու, տրամաբանելու, համադրելու կարողությունները
- Կհմտանան կյանքում ինքնուրույն որոշումներ կայացնելու, արարքների համար պատասխանատվություն կրելու մեջ:

Նպատակին հասնելու համար պետք է հաղթահարեն մի շարք դժվարություններ: Խումբը պետք է փորձի ընդհանրություններ գտնի տեսակետների միջև, կարողանան ճիշտ հասկանան տրված առաջադրանքը, աշխատեն խմբի բոլոր անդամները:

Փոքր խմբային աշխատանքի նպատակները և կազմակերպման փուլերը

Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում [1]:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ:

Այս աշխատանքում ցանկանում ենք,անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. Դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը, ալև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը [2]:

20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուին գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում:

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

- զարգացնում է միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,

[1] Պուրուկուրա Վ, 2006, էջ 95
[2] Սահակյան Վ., 2020, էջ 3

- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:[3]

Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի խմբի յուրաքանչյուր անդամ կարողանա արտահայտել իր տեսակետը, ինչպես նաև դաստիարակել լսելու և դիմացինի տեսակետը, կարծիքն ընդունելու, հանդուրժելու ունակություն: Աճում է և անհատական օգնությունը յուրաքանչյուր սովորողին ինչպես ուսուցչի, այնպես էլ խմբի անդամների կողմից: Սովորողների գիտելիքներն արդիականանում են, կոնկրետանում և ամրագրվում հենց իրենց դասընկերոջը բացատրելու ընթացքում:

Գ.Կ.Սելևկոն առանձնացնում է ուսումնական գործունեության խմբային աշխատանքի կազմակերպման գործընթացի հետևյալ փուլերը.

1) խմբային առաջադրանքի կատարման նախապատրաստում.

- ուսումնաճանաչողական խնդրի առաջադրում,
- աշխատանքի կատարման հաջորդականության հրահանգավորում,
- ըստ խմբերի դիդակտիկ աշխատանքային նյութերի բաշխում,

2) խմբային աշխատանք.

- ծանոթացում առաջադրանքի հետ, խմբի աշխատանքի պլանավորում;
- խմբի ներսում առաջադրանքի բաղադրիչների բաշխում,
- անհատական հանձնարարությունների կատարում;
- խմբային աշխատանքի անհատական արդյունքների քննարկում: Խմբերում
- առաջադրանքի ընդհանուր քննարկում (լրացում, ճշգրտում, դիտողություններ և ընդհանրացումներ),

3) եզրափակիչ մաս.

- հաղորդագրություն խմբերի աշխատանքների արդյունքների մասին;
- ճանաչողական խնդրի վերլուծություն, անդրադարձ,
- ընդհանուր եզրակացություն խմբային աշխատանքի և յուրաքանչյուր խմբի ձեռքբերման մասին: [4]

[3] Սահակյան Վ., 2020, էջ 279

Խմբերի ձևավորման սկզբունքները, եղանակները, ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը

Խմբային աշխատանք անցկացնելու համար անհրաժեշտ է նախօրոք մտածել և պատրաստվել: Պարզ է,որ նման աշխատանքը պահանջում է հավելյալ ժամանակ, փոխարեն մանկավարժական արդյունքը զգալիորեն ավելի բարձր է: Անհրաժեշտ է աշակերտների հետ միասին մշակել խմբային աշխատանքի կանոններ: Ցանկալի է, որ խմբում լինեն տարբեր ակադեմիական առաջադիմություն ունեցող համատեղելիությամբ տարբեր աշակերտներ յուրաքանչյուրի հնարավորությունները ռեալիզացնելու և անձնական բնութագրիչներին նպաստելու երաշխավորությամբ:

Խումբը տրված հանձնարարությունը կատարում է առաջնորդի կամ ուսուցչի ղեկավարությամբ: Խմբին տրվում է հանձնարարություն, որը կատարելու համար նախօրոք սահմանված է ժամանակ: Խմբային աշխատանքի ժամանակ միասնական պետք է քննարկեն խմբային աշխատանքի ընթացքը և արդյունքները: ՈՒսուցիչը դիտարկում է աշխատանքի ընթացքը, արձագանքում է հարցերին, անհրաժեշտության դեպքում օգնում է առանձին աշակերտների կամ խմբին:

Խմբի կազմը լավագույնս ընտրվում է՝ հաշվի առնելով երեխաների անձնական հավանումներն ու հակակրանքները: Իհարկե, խմբերի բաժանելիս պետք է հաշվի առնել հոգեբանական համատեղելիությունը, ցանկությունները, ամեն ինչ, որպեսզի երեխաները հարմարավետ աշխատեն և կատարեն ուսուցչի կողմից սահմանված առաջադրանքը[5]:

Ամենափոքր խմբում պետք է ընդգրկած լինի առնվազն 3 աշակերտ, քանի որ դրանից պակաս լինելու դեպքում աշխատանքը խմբում դառնում է զույգերով կամ անհատական: Մարդկանց օպտիմալ թիվը, ինչպես ցույց է տալիս փորձը, 4-5 մարդ է, ինչը թույլ է տալիս տեսնել խմբի յուրաքանչյուր անդամի աշխատանքը:Վեցից ավելի աշակերտներից բաղկացած խմբերը դժվար է կառավարել, քանի որ որոշ աշակերտներ

---

[4]Սելեվկո Գ., 2005, էջ 556

[5]https://aravus.schoolsite.am/%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2/?fbclid=IwAR2wU6pQIWke4ZWmhe80Kv3iN9cICQC5kRfODJnKfl-dgzqpH2OnYFPtdgo

կարող են որոշել չմասնակցել խմբի աշխատանքներին և նույնիսկ խանգարել մյուսներին։

Երբ խմբերը ձևավորված են ու հետազոտության թեմաներն ընտրված, աշակերտները մշակում են գործողությունների պլան, որոշում խմբի անդամների պարտականությունները: Եթե խմբի բոլոր անդամներն ուսումնասիրում են ամբողջական թեման, ապա պարտականությունների բաժանումը հեշտ է կատարել՝ ընդամենը որոշելով, թե ով ինչ ռեսուրսներ է ուսումնասիրելու: Իսկ երբ խումբը բաժանվում է ենթախմբերի և յուրաքանչյուր ենթախումբ ուսումնասիրում է որևէ ենթաթեմա, ապա անհրաժեշտ է նաև որոշել, թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքները, ով է պատրաստելու,թեմայի ամբողջական ներկայացումը:

Փոքր խմբով աշխատանքի առավելությունները և սահմանափակումները

Խմբային աշխատանքի ձևը մեր աշակերտների սիրելի աշխատանքի ձևերից մեկն է: Նրանց համար ամենակարևորը սխալվելու վախի հաղթահարումն է, իրենց ավելի վստահ զգալու հնարավորությունը : Այս ձևը հարմար է նրանով, որ սովորողներն ավելի լավ են յուրացնում նյութը: Խմբային ձևով ուսուցման կողմնակիցները փոքր խմբերով աշխատանքում կարևորում են հետևյալ առանձնահատկությունները. խմբի յուրաքանչյուր անդամի պատասխանատվություն սեփական և խմբի հաջողությունների համար, սոցիալական հմտությունների ձևավորումը: Այն օգնում է զարգացնել նրանց ստեղծագործական ունակությունները:

Ի վերջո, խմբային ձևն օգնում է դասը ավելի հետաքրքիր դարձնել: Բայց աշխատանքի խմբային ձևը կարող է ունենալ մի շարք թերություններ:

Ուսուցիչները դժվարանում են նաև խմբային աշխատանքի արդյունքները գնահատելիս: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են՝թղթի վրա գրիչով գրավոր աշխատանքները կամ բանավոր հարցումները, հիմնականում բևեռված են ակադեմիական գիտելիքների վրա: Գնահատումը պետք է կազմակերպել այնպես, որ անհատ աշակերտի գնահատման արդյունքները փոխկապակցված լինեն փոքր խմբում նրա թիմի կատարած աշխատանքի արդյունքների հետ:

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 20-25 (որոշ տեղերում՝ 30-34): Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ: Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլն:

Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դումենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի կարելի է առաջարկել խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

Հետազոտական համատեքստ

Ուսումնասիրելով և վերլուծելով խմբային ձևի օգտագործման վերաբերյալ գրականությունը օտար լեզվի դասերին, մենք համոզվեցինք աշխատանքի այս ձևի կիրառման արդյունավետության և հաջողության մեջ:

Դրա կիրառումը հոգեբանորեն հիմնավորված է և մանկավարժորեն նպատակահարմար է: Խմբային աշխատանքի տարբեր տեսակներ կան: Հետևաբար, ուսուցիչը հնարավորություն ունի ընտրելու խմբային աշխատանքի տեսակը ' համաձայն հմտություններ, որոնք պետք է ձևավորվեն:

Խմբային աշխատանքի կարելի է համարել որպես օտար լեզու սովորելու մոտիվացիա, այն մեծացնում է հետաքրքրությունը առարկան, ցույց է տալիս, որ օտար լեզուն հաղորդակցության իրական ձև է, բազմազանություն է բերում դասի սովորական ընթացքին: Խմբային աշխատանքի ձևերը գրավում են ինչպես կրտսեր,այնպես էլ ավագ դպրոցականներին:

Խմբային աշխատանքը պետք է տեղի ունենա օտար լեզվի դասընթացների ընթացքում ամբողջ ուսումնական գործընթացի ընթացքում, քանի որ այն լիովին արտացոլում է առարկայի առանձնահատկությունները, օտար լեզուն կիրառելու բանավոր պրակտիկայի առավելագույն հնարավորություն է տալիս:

Ես հաճախ օգտագործում եմ խմբային աշխատանքը ռուսաց լեզվի և գրականության դասերին ' բնօրինակ և ոճավորված տեքստեր ստեղծելիս: Օրինակ ՝ "Հեքիաթներ" թեման ավարտելուց հետո աշակերտները ստեղծում են իրենց սեփական գրքերը: Ոմանք գալիս են տեքստով, մյուսները կազմում են շապիկն ու նկարազարդումները, իսկ մյուսները պատրաստում են հաղորդագրություն այն մասին, թե ինչպես է ստեղծվել իրենց գիրքը: Այսպիսով, յուրաքանչյուրը գտնում է իր կարողությունները կիրառելու հնարավորություն:

Աշխատանքի իրականացման համար որպես թիրախային խումբ ընտրել եմ միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի <<ռուսաց լեզու>> առարկայի դասաժամը: Դասի թեման <<Текст. Типы текста>>:

Գրավոր շարադրությունների կատարելագործումը, տեքստի վերլուծությանը, տեքստի մեջ սյուժետային փոփոխություններ կատարելը բարդ և աշխատատար

աշխատանքը է, որը կարող է ակտիվացվել թիմային և խաղային գործունեությամբ՝ կազմակերպելով, օրինակ <<Հրատարակչությունների մրցաշար>>:

Խմբերին առաջարկելով "հրատարակչությունների" մրցումներ, որոնք ղեկավարում են խմբագիրները, իսկ աշխատակազմը բաղկացած է սրբագրիչներից, գրախոսներից և գեղագիրներից:

Խմբագիր-Կատարում է ամենադժվար աշխատանքը, ուստի այս դերը, որպես կանոն, ստանձնում է կապիտանը:

Ուղղագրիչը պատասխանատու է ուղղագրված տեքստում ուղղագրական և կետադրական նորմերի պահպանման համար (Սկզբում այս դերը առաջարկվում է խմբի այն անդամների կողմից, ովքեր դեռ պատրաստ չեն հանդես գալ որպես խմբագիրներ կամ գրախոսներ):

Գեղագիր - այս դերը տրվում է խմբի ամենաթույլ աշակերտին: Եվ որպեսզի նա իրեն վիրավորված չզգա, ես նախատեսում եմ, որ նրան վստահում է շատ կարևոր առաջադրանք (նույնիսկ եթե ընկերոջ սրբագրիչի հսկողության տակ է)-ճիշտ և գեղեցիկ արտագրել տեքստը:

Խաղի ընթացքը:

I փուլ-դերերի բաշխում;

2-րդ փուլ-տեքստի նախնական ծանոթացում:

Թերությունների կոլեկտիվ քննարկում: Խմբագրի առաջին խմբագրումները՝ մանրամասն բացատրություն խմբի մյուս անդամներին;

3-րդ փուլ-կրկնակի ընթերցում: Այստեղ վերացվում են բառերի օգտագործման և նախադասությունների կառուցման թերությունները՝ օգտագործելով խորհրդանիշները;

4 – րդ փուլ - "ձայնի" ստուգումը ենթադրում է բարձրաձայն կարդալ տեքստը (ցածր ձայնով): Այս ընթերցմամբ վերջնականապես բացահայտվում են բոլոր թերությունները □

5-րդ փուլ-արդյունքների ամփոփում, որի հիման վրա կառուցվում է գրախոսների աշխատանքը:

6-րդ փուլ-վերանայման պլանի և բովանդակության քննարկում:

7-րդ փուլ-գրախոսը գրում է ակնարկ, իսկ գեղագրիչները, խմբագրի և սրբագրիչի հսկողության ներքո, վերաշարադրում են վերանայված տեքստը: Ավելին, ուղղագրական

և կետադրական սխալները շտկելու վերաբերյալ դիտողություններ կարող են անել միայն սրբագրիչը, և խմբագիրը պետք է հետևի, որ կատարվեն նրա բոլոր խմբագրումները:

8-րդ փուլ-վերանայված տեքստի և արդյունքում ստացված վերանայման վերջնական տարբերակի ընթերցում,ստուգում:

Խաղը օգնում է փորձ կուտակել Ձեր սեփական հայտարարությունները ստեղծելու համար, ընդլայնում է գրական հորիզոնները, սովորեցնում է ձեզ ավելի լիարժեք ընկալել գրողի վանկի առանձնահատկությունները:[6]

Առաջադրանքների իրականացման ողջ ընթացքում ուսուցչի կողմից իրականացվել է մանրամասն հսկողություն կատարվող աշխատանքների նկատմամբ, որպեսզի հնարավորություն ստեղծվի ամբողջությամբ գնահատել հետևյալ գործոնները.

- Թիմային աշխատանք
- Քննարկում
- Որոշումների կայացմանը
- Մասնակցություն
- Թիմի կատարած աշխատանքների ներկայացում:

Իրականացնելով կատարված աշխատանքների ամփոփում՝ կարող ենք նշել հետևյալ արդյունքները.

Թիմերի ոչ բոլոր մասնակիցների կողմից են դրսևորվել թիմային աշխատանքի հմտություններ, սա վերաբերում է թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին, իսկ ոմանք էլ ցանկացել են թիմի ողջ պատասխանատվությունը վերցնել իրենց վրա:

Սակայն սրանք հատուկենտ դեպքերի մասին են, իսկ հիմնական պատկերը բավականին գոհացնող էր, քանի որ աշակերտների մեծամասնությունը ներգրավված է եղել թիմի աշխատանքներին, կատարել է այն աշխատանքները, որոնք հանձնարարված են եղել: Մեր կողմից կարևորվել է նաև կատարված աշխատանքների ներկայացման ձևաչափը՝ թիմի անդամների ներգրավվածության մասով:

[6]https://infourok.ru/statya-rabota-v-malih-gruppah-kak-interaktivniy-metod-obucheniya-na-urokah-russkogo-yazika-i-literaturi-431312.html



Մասնավորապես՝ կային խմբեր, որոնք իրենց կատարած աշխատանքի ներկայացումը վստահել էին խմբի ամենաակտիվ, բարձր առաջադիմություն ունեցող անդամին, սակայն կային խմբեր, որոնք ընտրել էին յուրաքանչյուր անդամի կողմից մի հատված ներկայացնելու սկզբունքը, որպիսի մոտեցումն առավել ողջունելի է մեր կողմից, քանի որ արտացոլում է ոչ միայն աշխատանքի կատարման ընթացքի, այլև արդյունքների ներկայացման հարցում ողջ թիմի ներգրավվածությունը:

Վերջաբան

Ուսումնասիրելով համագործակցային ուսուցումը, կարելի է ասել, որ այս մեթոդի ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը, սովորողի մեջ ձևավորելով նոր գաղափարներ, հետաքրքրությունները: Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Այս ամենը զարգացնում է երեխայի երևակայությունը, նրա համար առավելագույնս հետաքրքիր և հաճելի է դառնում դասի ամբողջ ընթացքը: Դասը հետաքրքրություն է առաջացնում նաև դասընկերների շրջանում, ձևավորում է առողջ մրցակցություն:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս նշելու, որ փոքր խմբերով աշխատանքների իրականացումը կարող է մեծապես նպաստել կրթության որակի բարձրացմանը և ուսուցման գործընթացի արդյունավետության ապահովմանը:

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն, և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով: Եթե համառոտ սահմանենք, համագործակցային ուսուցումը սովորելն է՝ խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում է ըմբռնելու նյութը:

Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ ունենալը, այլև կարևորվում է խմբային զարգացման միջոցով հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ դառնալը:

Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը, պատասխանատվությունը,ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտությունները:

Համագործակցային ուսուցման նպատակն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժանամանակակից հասարակության մեջ, ինչպես նաև՝ խմբի ակտիվ և համագործակցելուն պատրաստ անդամ:

Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Փոքր խմբերով աշխատանքների իրականացումը գլխավորապես օժտված է առավելություններով, սակայն պետք չէ գերագնահատել այս մեթոդի կիրառությունը, ուստի այն պետք է կիրառել մնացած մեթոդների զուգակցմամբ՝ պահպանելով նաև մյուս մեթոդների օգտակար տարրերի ազդեցությունը:

Գրականության ցանկ

1. Սահակյան Վ., Համագործակցային ուսուցման, համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետ հմտությունների ձևավորումը պատմության դասերին, Գիտական տեղեկագիր, №1, Երևան, 2020:
2. Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում, վերապատրաստողի ուղեցույց, Երևան, «Անտարես», 2006:
3. Селевко Г. К. Энциклопедия образовательных технологий. В 2-х т. Т. 1. –М.: Народное образование, 2005. – 556 с
4. https://aravus.schoolsite.am/%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2/?fbclid=IwAR2wU6pQIWke4ZWmhe80Kv3iN9cICQC5kRfODJnKfl-dgzqpH2OnYFPtdgo
5. https://infourok.ru/statya-rabota-v-malih-gruppah-kak-interaktivniy-metod-obucheniya-na-urokah-russkogo-yazika-i-literaturi-431312.html